ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անցնող երկու ամիսները մեր Եկեղեցու համար կարեւորվեցին միջեկեղեցական հարաբերությունների ու էկումենիկ շարժման բնագավառում եւ 1700-ամյակի հանդիսությունների շրջագծում տեղի ունեցած երեք նշանակալից իրադարձություններով:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հունիսի 23-29-ը Ավստրիայում մասնակցեց Եվրոպական Եկեղեցիների Խորհրդի եւ Կաթոլիկ Եպիսկոպոսների Եվրոպական Խորհրդի Գրաց քաղաքում կազմակերպած Եվրոպական Երկրորդ էկումենիկ Համաժողովին:

Համաժողովի երկրորդ լիագումար նիստում որպես գլխավոր բանախոս զեկուցումով հանդես եկավ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը: Վեհափառի զեկուցումը ոչ միայն մեծ ուշադրությամբ լսվեց եւ բարձրորեն գնահատվեց համաժողովի մասնակիցների կողմից, այլեւ հանգամանալի կերպով մեկնաբանվեց զանգվածային լրատվության միջոցներով: Համաժողովի ավարտից հետո Վեհափառ Հայրապետը Հովվապետական իր անդրանիկ այցելությունը տվեց ավստրիահայ համայնքին, եղավ Վիեննայի Մխիթարյան միաբանությունում:

Հուլիսի 1-ին Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վիեննայից ժամանեց Մոսկվա՝ Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիյ Բ-ի հետ նախագահելու Կրեմլի «Ուսպենյան» թանգարանում «ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՆՁԵՐԸ» ցուցահանդեսի բացման արարողությանը, որը առաջինն էր 1700-ամյակի շրջանակում կազմակերպվելիք համանման միջոցառումների շարքում: Այնուհետեւ մի շարք կարեւոր հանդիպումներ ունենալով տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ՝ հուլիսի 4-ին Վեհափառ Հայրապետը Մոսկվայից վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

1997 թ. հուլիսի 21-24-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հրավերով փոխադարձ այցելությամբ Հայաստան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Բարդուղիմեոս Առաջինը: Այցելության այս չորս օրերի ընթացքում Նորին Սրբությունը Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի ընկերակցությամբ հանդիպեց Հայաստանի Հանրապետության նախագահի հետ, եղավ հոգեւոր, մշակութային եւ գիտական մի շարք կենտրոններում, այցելեց աղետի գոտի, ծանոթացավ Հայաստանի հունական համայնքին:

Այս այցելությունն իր կարեւոր նպաստը բերելով երկու Եկեղեցիների եւ ընդհանրապես միջեկեղեցական հարաբերությունների առավել զարգացմանը, կարեւորվեց նաեւ պատմականորեն, որովհետեւ առաջին անգամ Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքը: